

ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐ

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԺԱՌԱՆԳԱԿՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ ԸՆԺԱՅԱՐԱՆԻ

Ամենապատիվ

Տ. Եղիշէ Ս. Արքեպս. Տէրտէրեան
Բարեխնամ Պատրիարք Ս. Աթոռոյս

Սրբազան Հայր,

Դպրոցական տարեւըջանը զոր կը փակենք այսօր, կը տարբերի միւս տարիներէն՝ իր նշանակութեամբ: Այսօր, ուսումնական նոր ծրագրի մը երկու տարիներ առաջ սկսուած կիրարկութեան առաջին արդիւնքներն են զոր կը բերենք ու կ'ընծայենք Ձերդ Ամենապատուութեան:

Երկու տարիներ առաջ, Ձեր հաւանութեամբ, վերամշակեցինք կրթական մեր ծրագիրը, եւ, թելադրուած օտար դպրեմանքերու կիրարկած դասաւանդական արդի մօտենցումներն ու բարեկարգութիւններէն, մեր ծրագիրը դրինք նոր հիմքու վրայ. նախ՝ Ժառանգաւորաց չորս տարիները բարձրացուցինք հինգի, որոնց աւարտին Ժառանգաւորը ուսած կ'ըլլայ դիտական, Թուարանական եւ լեզուական այն բոլոր առարկաները, որոնք կը պահանջուին երկրորդական վարժարանի մը ընթացաւարտ աշակերտներէն: Յատուկ շնորհ մը դրինք անգլերէնի եւ հայերէնի ուսուցման, նկատի ունենալով մանաւանդ որ մեր աշակերտութիւնը կը հասնի Երուսաղէմ տարբեր բազմաթիւ դպրոցներէ, առ հասարակ ուսումնական աղքատ ծրագրով մը, նոյնիսկ երբեմն անգիտակ մայրերի լեզուին եւ անգլերէնին:

Ուրախ ենք արձանագրելու այստեղ թէ, հակառակ ամէն դժուարութեան, յաջողե-

ցանք յաղթել այլազանութիւններուն՝ որոնք կը տարբերէին նոյն դասարանի աշակերտները իրարմէ եւ այսօր, իւրաքանչիւր դասարանի աշակերտութիւն միաձուլուած է լեզուական եւ գիտական առարկաներու իր պատրաստութեան մէջ եւ հասած մակարդակի մը՝ որ իւրաքանչիւր դասարան կ'ընէ ամբողջութիւն մը, կրթական ծրագրին համապատասխան:

Մեր նոր ծրագրով բազմացուցինք նաեւ ազատ սերտողութեան ժամերը եւ աշակերտութիւնը մղեցինք անհատական աշխատանքի, ուսուցիչներու թելադրութեամբ եւ ուղղութեամբ: Այստեղ եւս ուրախ ենք արձանագրելու որ մեր Ժառանգաւորներու ընթերցասիրութիւնը անցաւ մեր նախատեսութիւնները: Ժառանգաւորացի եւ կիւլպենկեան Մատենադարանին միջեւ ստեղծուեցաւ կենդանի կապ մը, որ Հայ դպրականութեան, պատմութեան եւ արուեստի գիրքերու հոսանքով մը կապեց մեր աշակերտութիւնը Մատենադարանին հետ: Դրժուար է գնահատել բարիքը նման հետաքրքրութեան մը. բաւ ըլլայ հաստատել միայն թէ բացի հայերէն լեզուի յղկումէն եւ ճիշտացումէն, Հայ վէպին, պատմական գլխաւորութեան եւ բանաստեղծութեան տարածումը բացաւ մեր Ժառանգաւորներու հոգիները ազգային աւելի խոր գիտակցութեան մը եւ պատմական աւելի լայն հորիզոնի մը:

Նոյն մտահոգութեամբ այս տարուան ընթացքին մեր աշակերտութիւնը ունեցաւ երկու գրական-գեղարուեստական երեկոյթներ, որոնց հաճեցաւ նախադահլ Ձերդ

Ամենապատուութիւնը. անոնք նուիրուած էին Կոմիտաս Վարդապետի եւ Յովհաննէս Թումանեանի ծննդեան 100-ամեակներուն: Իսկ այսօր մեր այս հաւաքոյթը վերածեցինք Հանդէսի մը՝ մեզի համար այլապէս նշանակալից եւ թանկագին յիշատակի մը նուիրուած: Երջանկայիշատակ Թորգոմ Պատրիարքի վախճանման 30-ամեակին, որուն եկեղեցական եւ գրական գործունէութեան յատկացուած մեր աշակերտներու ուսումնասիրութիւնները իբր մեր երախտագէտ կրթացումներուն արտայայտութիւնը չէ որ կը բերենք այստեղ, այլ իրեն փաստը թէ Երջանկայիշատակ Պատրիարքին օրով վերածաղկած Դպրեմանքը կը ձգտի աւելի եւս ծաղկեցնել իր ժառանգութիւնը անոր աշակերտին եւ յաջորդին օրով:

Այս տարուան արդիւնքը ամբողջական կերպով ներկայացնելու համար անհրաժեշտ է յիշել կրօնական դաստիարակութեան տըրւած ուշադրութիւնը, որ մեր Վանքի դպրատան աւանդութիւններուն, ծիսակատարութիւններու մէջ պահուած Երուսաղէմի յատուկ պահպանողականութեան, Սուրբ Տեղեաց ներշնչով մշտնորոշ մէջ կատարուած Հանդիսութիւններուն եւ Վանքի խաղաղ միջավայրին բարեբար աղօթեցութեան վրայ աւելցուց բարոյախօսութեան եւ Սր. Գրքի ընթերցանութեան ու մեկնութեան երկոսն, ընդհանրապէս Շարաթ օրերուն: Մտքին ու հոգիին հետ ուշադրութիւն տրուեցաւ նաեւ մարմինին: Առատեան աւանսօրեայ մարզանքէն զատ, աշտիկերութեան արուեստը առիթը Փութաօյի խաղերու եւ կազմակերպուած մրցումներու՝ Հայ միութիւններու եւ օտար դպրոցներու աշակերտութեան հետ: Խաղի զաշտին վրայ եւս մեր աշակերտութիւնը միայն յաղթանակներ արձանագրեց:

Ժառանգաւորացէն ներս նոր երեւոյթ մըն է պատի թերթը, զոր երեք աշակերտներ՝ Պետրոս Սարգիսեան, Դէրբէ Աւամեան եւ Գրիգոր Ափարեան, ամէն շաբաթ կանոնաւորաբար կը պատրաստեն, ցոյացնելու համար մեր դպրոցական կեանքը: Հոն կ'երեւին լուսադոյն չարադրութիւնները, խմբագրական մը՝ նուիրուած դպրոցական հարցի մը, այլ չարթուան Հայ գր-

ականութեան դասէն ընտրուած գրական էջ մը, բարոյախօսական թելադրութիւններ, չարթուան ժառանգութիւն եւ գիտական ու մարզական ախարհէն քաղուած հետաքրքրական լուրեր: Ծաշակով եւ ինքնաձգով պատրաստուած մեր չարաթաթերթը կարճ ժամանակի մէջ ապահովեց տոյց հետաքրքրութիւնն ու համակրութիւնը եւ դարձաւ իրենց մտքին ու ժառանգութիւններուն հարապատարտայայտութիւնը:

Ընծայարանի մեր սարկաւազները եւս պատրաստած են արդէն առաջին թիւը պարբերականի մը, որ յոյս կը տեսնէ մօտ օրէն, «Տաքիւ» անունով:

Ընծայարանի միակ դաստարան բարենորոգ մեր հինգ սարկաւազներով, բոլորեց նաեւ ուսման եւ եկեղեցական ծառայութեան բեղմնավոր տարի մը, որ յատկանշուեցաւ Երաջանքին լեզուի ցուազցումով: Գալ տարւելջմանին սարկաւազաց դաստարանը պիտի սկսի սորվիլ նաեւ յունարէն, որպէսզի պատրաստ ըլլայ համալսարանական բարձրագոյն դասընթացներու հետեւելու ապագային:

Անշուշտ որ մեր կեանքին մէջ մեծապոյն երեւոյթը Տատուրեան սաներու երեւումն է: 1967-ին երբ կտրուեցանք Միջին Արեւելքի հայկական հոծ դաշութներէն, ուրկէ կու գային մեր աշակերտները, Ձերդ Ամենապատուութեան կարգադրութեամբ Թուրքիա զրկուեցաւ լուսահոգի Տէր Գարապետ Աւագ Քահանայ եւ յաջորդեցաւ 20 աշակերտներ լերել դանազան դպրոցներէ եւ տարիներ տարիքով, որոնք ընդունուեցան Ժառանգաւորացի դանազան դասարաններու մէջ: Իսկ յաջորդ տարին, Պոսէն Տէր Բարթող Պաշակէր Քահանայ 10 աշակերտներ եւս բերաւ Թուրքիայէն: Տարիքի անտուգարութիւնը, մայրենի լեզուի երբեմն բաձցարձակ անգիտութիւնը, ուսումնական ձող հասարակ տղայ մակարդակը ստիպեցին՝ Թուրքիայէն ձկնած աշակերտութեան հետեւ ստեղծուի նոր դրութիւն մը, որով ըմբռնեց համար կազմուեցաւ բացառիկ դպրոցացի մը, հայերէն ուսուցանելու, ուրիշներ զգուհուեցան Ժառանգաւորացի Վարժարանը, կրկնապէս նոյն համար որ տեղաւորուեցաւ զանազան դասարաններու մէջ, նշանակուեցան յա-

տուեկ ռաւարդիչներ, օգնելու համար լեզուական եւ այլ գասերու, ուր նորեկներու գիտութիւնը անբաւարար էր: Կարճ ժամանակամիջոցի մէջ յայտնուեցաւ ուրախ իրողութիւնը թէ այս աշակերտներուն մէջ կային ուշիմ եւ առ հասարակ ընդունակ տղաներ, որոնք առանց դժուարութեան բարձրացան դասարանի մակարդակին:

1969-ի սկիզբը երբ Վեհափառ Կաթողիկոսի կողմէ նշանակուած Յանձնախումբը այցելեց ժողանդաւորաց եւ տեսաւ այս նոր երեւոյթը, ազգային բարերար Պարոն Տատուր Տատուրեան ստանձնեց 100 նոր աշակերտներու մեկնեալութիւնը ապահովել, եթէ կարենայինք նոր սաներ բերել Թուրքիայէն: Հոգեշնորհ Տ. Արշէն Վարդապետ ղրկուեցաւ այդ առաքելութեամբ եւ յաջողեցաւ բերել 51 աշակերտներ, որոնք ծածօթ եւ այժմ Տատուրեան Սանի անունով: Անոնց մեծ մասը տեղաւորուած է Միւրառնութեան Թաղին մէջ եւ յանձնուած անձնուէր Հոգաճութեան Տէր եւ Տկն. Հրանդ Նազդաշեաններուն: Իսկ յիսուսմէկէն տասներջորս աշակերտներ, որոնք հայկական դպրոցէ անցած էին Պոլսոյ մէջ, ընդունուեցան ժառանգաւորաց եւ իրենց նախորդներուն նման կարճ ժամանակի մէջ յարմարեցան միջավայրին եւ ուսման ծրագրին: Իսկ անոնք որ ղրկուեցան Թարգմանչաց Վարժարան՝ այնտեղ ստանալու համար իրենց ուսումը, յայտնաբերեցին անսպասելի ուշիմութիւն եւ ուսումնաստենչութիւն: Անոնցմէ եօթ տղաներ այժմ գիտած են Տեսչութեան, ընդունուելու իբրեւ ժառանգաւոր սաներ: Այսպէսով ժառանգաւորաց Վարժարանի մեր ուսանողութեան թիւը կը հասնի 40 աշակերտի եւ 5 օտրկաւազի, որոնց վրայ պիտի գան աւելնալ յիշեալ եօթ տանիքը, ինչ որ բացառիկ երեւոյթ է մեր Հաստատութեան պատմութեան մէջ: Կապահովեցինք Ձեռք Ամենապատուութիւնը թէ եթէ շարունակուել, եւ վստահ ենք որ պիտի շարունակուի, Մեծայայրդ Տիար Տատուր Տատուրեանի եւ իր աշնիւ բարեկամներուն Հոգաճութիւնն ու օժանդակու-

թիւնը մեր Հաստատութեան, պիտի կարեղ նանք շատ մօտ ապագային ժառանգաւորացն ու Ընծայարանը բարձրացնել կրթական հաստատութեան մը արտիճանին՝ որ մեր հայկական իրականութեան մէջ պիտի զրաւէ իր պատուոյ տեղը, իբր ոչ Ֆրանսիայի մէջ՝ Հայ Բիղղեցականներու պատարաստութեան համար, այլ նաեւ իբր Ռուստմակեան կեդրոն՝ Հայ մտաւորականութեան մը կազմաւորման համար:

Այս առթիւ, անխառն հրճուանքով կ'ուզեմ յայտարարել թէ վերոյիշեալ նոյն Յանձնախումբին հետ Երուսաղէմ եկած ու այստեղ իր խոստումը վերանորոգած Հայկական Բարեգործական Ընդհանուր Միուլթեան ազգապարծան Նախագահ՝ Տիար Ալեք Մանուկեան, ըրած է արդէն դրամական առաջին փոխանցումը՝ քր անանձով կառուցուելիք Գպրեմանքի նոր շէնքի շինութեան համար: Երկար բանակցութիւններէ եւ տեսակցութիւններէ ետք, մեր ըստ ջանքի թարերարը հաւանութիւն յայտնեց վերամշակուած ծրագրին, որ արդիական ամէն յարմարութիւններ ներկայացնող հոյակապ շէնք մը իբրեւ պիտի բարձրանայ Վանքի Աւագ Դրան գիմաց, ընդունելու համար մինչեւ 150 աշակերտ:

Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի նոր ծրագիրներու եւ վերելքի մասին մեր խօսքը չենք կրնար փակել առանց համակրութեամբ եւ երախտագիտութեամբ յիշելու թէ Ամերիկայի մէջ երկու տարիներէ ի վեր կազմուած է ու կը գործէ Երուսաղէմի Պատրիարքարանին Բարեկամներու Միութիւնը Փրօֆ. Վազգէն Բարսեղեանի նախագահութեամբ, որ նուիրատուութեամբ եւ հաւատքով զօրավիշ կը կանգնի Պատրիարքարանիս բոլոր ծրագիրներուն եւ յատկապէս մեր Հաստատութեան: Այս Միութեան կողքին այժմ կազմուած է ժառանգաւորաց Վարժարանի Յանձնախումբը, Ատենապետութեամբ Մեծայայրդ Տիար Տատուր Տատուրեանի, Ատենադպրութեամբ փաստաբան Պրն. Ռիչըրտ Կրէկըրիի եւ Գանձապահութեամբ Աթուր Բարբերար

Պրն. Սուրեն Ֆէսճեանի, որոնք, մեզի հետ ղործակցաբար, ապահոված են հետեւեալ բարերարութիւնները. 3 3 3 3 3 3

Տառուր Տառուրեան	20 սամ
Գալուստ Կիւլպէնեան Հիմնրկ.	10 սամ
Հ. Բ. Ը. Միտքիւմ	10 սամ
Տէր Է. Տկն. Հայկ Գալուֆճեան	10 սամ
Բիւզանդ Բիրամեան	5 սամ
Գեորգ Մէմրեան	4 սամ
Տիգրան Միսիրեան	3 սամ
Տիկիմ Ֆլորա Սարգիսեան	3 սամ
Հատըրտ Գարակէօզեան Հիմնրկ.	2 սամ
Համա-Սերաստեայ Հայր. Միտքիւմ	2 սամ
Սուրէմ Ֆէսճեան Է. Բրդիմ. Ռապէր	2 սամ
Արամ Համեան	2 սամ
Աւմ Մարտիմ	2 սամ
Մամուկ Էֆէրճեան	2 սամ

Իսկ մէկական սան որդեգրած են Տիգրգ Վաղդէն Բարսեղեան, Կարօ Արթինեան, Գէորգ Պաշեան, Եղուարդ Պաշեան, Ռալֆ Ջարման, Յարութիւն Հայրապետեան, Վա- հէ Համբար, Նուպար Հինգլեան, Ծօրճ Գա- րսեղուշ, Տիկիւն Լիպման, Տիգրան Սմար- եան, Ծան Թէմպէք, Եղուարդ Թըրնամեան եւ Ռիշրտ Թըրնամեան:

Տակաւին, Մեծայարդ Տիգր Տառուր Տառուրեան յանձն առած է հոգալ Թուրք- իսկէն Լկոզ սաներու փոխադրութեան ծախ- սերը:

Մեր բարերարներուն եւ բարեկամնե- րուն, եկեղեցական, ազգային ու կրթական մեր ճիգերը հովանաւորող ազնիւ ազգային- ներուն կը յայտնենք մեր շնորհակալութե- նէն աւելի՝ մեր լաւատես վստահութիւնը Թէ իրենց սիրած ու քաջալերած գործը աւելի զօրաւոր արմատներ պիտի նետէ այստեղ եւ ծաղկի, իրեն հետ ծաղկեցնելով Երուսա- ղէմը:

Սրբազան Հայր,

Մեծ իրազործումի մը ճամբուն մէջ ենք. իրազործում մը որ փափաքէ, խանդա- վառութենէ ու երազէ ետք շօշափելի իրա- կանութիւն մը եւ փառաւոր իրազործում մը կ'ըլլայ այժմ: Ունինք տակաւին դժ- ուարութիւններ. յատկապէս ուսուցչական

կազմը զօրացնելու եւ ուսումնական մակար- դակը աւելի եւս բարձրացնելու մեր ճիգե- րուն մէջ: Վստահ եմ սակայն, որ ինչպէս ամէն դժուարութիւն մինչեւ այսօր, այս մէկը եւս պիտի հալի Ձերը Ամենապատու- թեան հովանաւորած եւ այնքան ջանքու- թեամբ խանդավառած շարժումին մէջ:

Վերջացնել առաջ, յանուն Տեսչու- թեան եւ ուսուցչական կազմին, մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք որ Ժա- ռանգաւորացի ընթացաւարտ վեց աշա- կերտներուն շնորհեցիք մաքուր եւ սուրբ ուրարը, եւ արտօնեցիք որ ընդունուին իր- րեւ Ընծայարանի աշակերտներ: Հպարտ ենք այս տարուան հունճով եւ կը վստահեցը- նենք Ձերը Ամենապատուութիւնը Թէ մեր վեց ուրարակիրները ուշիմ, աշխատասէր, շնորհալի եւ մանաւանդ իրենց եկեղեցական կոչումին գիտակից հաւատաւոր ընծայա- ցունք են, որոնց վրայ դրուած մեր յոյսե- րը բնաւ պիտի չտփուռնին: Կը խնդրենք որ Ձերը Ամենապատուութիւնը հաճի յանձնել Ժառանգաւորաց հինգերորդ դասարանի ըն- Թացաւարտներու վկայականները. անոնք են.

Ասատուր Արմէնեան
Գէորգ Աղամեան
Ենոյք Ձէքիճեան
Յակոբ Ռիւսթէմեան
Պետրոս Սարգիսեան
Սարգիս Տաւուպարեան

Կը խնդրենք նաեւ որ իւրաքանչիւր դա- սարանի ուսմանց մէջ առաջին եւ երկրորդ, ինչպէս նաեւ հայերէն, անգլերէն եւ արա- բերէն լեզուներուն մէջ առաջին հանդիսա- ցող աշակերտներուն յանձնէ իրենց նուէր- ները (Ն. Ամենապատուութիւնը բարձրա- նայով քեմ, խանդավառ մթնոլորտի մը մէջ կը բաժնէ շրջանաւարտներու. վկայական- ներն ու առաջին եւ երկրորդ հանդիսացող- ներու մրցանակները):

Իսկ մեզի բոլորիս՝ կը խնդրենք որ չը- սորհէք Ձեր օրհնութիւնը:

Մատչելով ի համբոյր Ձեր Ս. Աջոյն

ՇԱՀԷ ԵՊՍ. ԱՃԷՄԵԱՆ

Վերապետուշ